

ԿԵԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

**ԱԽՏԱԾԻՆ ՅԱՏԿԱՆԻՇԵՐՈՒ
ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ.
— ԽԱՌՆԱԾԻՆՆԵՐԸ**

Եթէ մարդոց ֆիզիքական յատկութիւններու փոխանցումը հետապնդել կ'ընտան հարց մըն է, հոգեկան մարդին մէջ պարագան ա՛լ աւելի խրթին է: Այսուհանդերձ կենսաբանները կը ջանան թել առ թել թնծուկը քակել:

Հոգեկան յատկանիւթերու փոխանցումը. —

Հոգեկան ընդունակութիւնները կամ խառնուածքի յատկանիշերն ալ կրնան կամ տիրական ըլլալ և կամ տիրապետուող, ենթամնաց:

Երաժշտական ձիրքը, որ բնածին է, տիրապետուող յատկանիշ մըն է: Երաժիշտ այրիի մը միութիւնը ոչ-երաժիշտ կնոջ մը հետ, կրնայ ոչ-երաժիշտ զաւակներու ծնունդ տալ: Բայց ձիրքը թաքուն կերպով կը մնայ և յաջորդական ոերունդին մէջ անսպասելի կէտի մը վրայ իր սկզբնական թափով կը պոռթկայ: Այսպէս կը բացատրուի երաժշտական տաղանդներու անակնկալ յայտնութիւնը ոչ-երաժիշտ ընտանիքներու մէջ:

Զայրացկոտ, դիւրագրգիռ խառնուածքը տիրապետող է հանդարտ, նոյնիսկ բնականոն խառնուածքի մը վրայ:

Մտային միջակութիւնը կամ տկարութիւնը տիրապետուող յատկանիշ մըն է: Խելացի և տկարամիտ երկու էակներու միութիւնը, կրնայ մեծաւ մասամբ ծնունդ տալ խելացի տղաքներու: Այս տեսակ խառնարիւն երկու խելացիներու ամուսնութենէն տկարամիտ էակներու ծնունդը հաւանական է: Բայց երկու տկարներու միութենէն բացարձակապէս անկարելի է խելացի տղաքներ սպասել, որովհետեւ երկու տիրապետուող յատկանիշեր տիրող յատկանիշի մը չեն կրնար փոխուիլ:

Ախտածին բերութեանց (tare) փոխանցումը. —

Ֆիզիքական որոշ թերութիւններ տիրապետող են առողջ կազմուածքներու վրայ և կան ուրիշ ախտածին թերութիւններ, որոնք կը տիրապետուին:

Առաջին խումբէն են, ձկնամորթութիւնը (ichthyosis), ոսկորներու դիւրաքեկութիւնը, ժառանգական շաքարախտը, բազմամատնութիւնը (հինգէ աւելի մատ ունենալը), ինչպէս նաև մատներու ուրիշ տխեղծութիւններ, աչքի վարագոյր(cataracte) և այլն:

Հաւանաբար տիրապետող են՝ ժառանգական անդամալուծութիւնը, սրունքներու քրոնիկ ուռեցքը (*cedème*), կանխահաս ճաղատութիւնը, վահանադեղձի ուռեցքը (*goître*), շնչերակային գերճնշումը, աղեթափութիւնը (*hernie*), եղճեռքը (*urlicaire*), եւ այլն:

Տիրապետող պակասութիւններն են իրական գաճաճութիւնը, յիմարութիւնը (*aliénation*), կանխահաս խենթութիւնը (*démence précoce*), մենամուլութիւնը (տեսակ մը խենթութիւն, *manie*), գանկի փոքրութիւնը, եւ այլն:


Այս յատկանիշերու փոխանցումին մէջ Մենտէլեան օրէնքները ի զօրու են: Այսպէս, տիրական մաքուր պակասաւոր մը (շաքարախտաւոր մը օրինակ) կ'ամուսնանայ առողջ էակի մը հետ: Իրենց զաւակները ամէնքն ալ հսկամէտ են շաքարախտի եւ պակասաւոր են: Երբ կէս-պակասաւորը կ'ամուսնանայ առողջ էակի մը հետ, զաւակները կ'իսով առողջ, կ'իսով պակասաւոր են: Երկու կէս-պակասաւորներ կ'ամուսնանան իրարու հետ, զաւակներուն երեք չորրորդը պակասաւոր, մէկ չորրորդը առողջ են:

Ընդհակառակն, տիրապետող պակասութիւն մ'ունեցող էակ մը (մենամուլ խենթ մը, օր.) երբ կ'ամուսնանայ առողջ էակի մը հետ, զաւակները արտաքնապէս առողջ են, բայց գաղտնապէս կը կրեն պակասութեան մը ենթամնաց սաղմը: Այս կէս-բնականոնները եթէ ամուսնանան բնականոններու հետ, կ'իսովին առողջ, կ'իսովին պակասաւոր էակներու ծնունդ կուտան: Երկու կէս-բնականոններ՝ իրարու մէջ՝ երեք չորրորդով բնականոն, մէկ չորրորդով պակասաւոր կը ծնին:

Այս օրինակներէն կարելի է եզրակացնել հետեւեալը. —

Տիրական յատկանիշերը կը փոխանցուին միայն զանոնք կրող ծնողներուն կողմէ, մինչդեռ տիրապետող յատկանիշերը դաւաճան են: Անոնք կը պահուըտին եւ ոչ մէկ նշան կը մատնէ անոնց գոյութիւնը: Յաճախ քանի մը սերունդներ կ'անցնին եւ այդ տիրապետող յատկանիշը, որ յաճախ ախտածին է, կը մնայ անյայտ, մինչեւ որ անսպասելի կերպով, արտաքնապէս առողջ երեւցող երկու էակներ ծնին ախտաւոր, պակասաւոր էակ մը: Ենթամնաց, բացասական յատկանիշն է քանի մը սերունդներ յետոյ, որ երեւան կ'ելլէ:

Համարիւն ամուսնութիւնները (ազգականական միութիւնները) նպատակայարմար չեն, որովհետեւ արեւակցութիւնները շատ դիւրութեամբ ի յայտ կը բերեն ենթամնաց ախտածին եւ թաքուն թերութիւն մը: Եթէ սակայն երկու էակները մաքուր են և առողջ, ունէ անպատեհութիւն մը չի ներկայացներ այդ նոյնարիւն ամուսնութիւնը:



0565-40

Ուրեմն, ամէն էակի արտաքինը իր իսկութեանց մէկ մասն է, որ մինակ կը ցոլացնէ: Բացայայտ անհատականութեան տակ ծածկուած է անյայտ, քնացող անհատականութիւն մը, որ պարտուած է առժամապէս, բայց ժառանգականօրէն միշտ կենսունակ է և օր մը ինքզինք ցոյց պիտի տայ սերունդին մէջ:

Խառնածնութիւնը (hybridation). —

Ճերմակ մը խափշիկուհիի մը հետ, կամ ճերմակ կին մը խափշիկի մը հետ կը ծնին միջին գոյնով զաւակներ, որոնք կը կոչուին խառնարիւն, խառնագոյն, (mulâtre):

Այս խառնագոյններուն միջև ամուսնութիւն մը, ըստ Մենտէլեան օրէնքներուն, պէտք էր տար մէկ մաքուր ճերմակ, մէկ մաքուր սևի դէմ, երկու խառնարիւն զաւակներու համեմատութիւն մը:

Իրողութիւնը այն է որ խառնարիւններէն միշտ խառնարիւն զաւակներ կը ծնին, կարծես ճերմակ և սև գոյները, այդ տիրական յատկանիշերը, բոլորովին կը կորսուին և նոր յատկանիշ մը — խառնարիւնութիւնը — կը փոխարինէ զանոնք: Նոյնիսկ ճերմակ այր մը խառնագոյն կնոջ մը հետ ամուսնանալով, շատ շատ, հազիւ զայն կրնայ բարեխառնել և ծնիլ աւելի բաց խառնագոյն զաւակներ:

Այս երևոյթը այսպէս կը բացատրուի. —

Երկու ցեղերու ճերմակութեան յատկանիշը, կամ սևութեան յատկանիշը, արդիւնք է մէկէ աւելի ժառանգական ազդակներու:

Ցեղային գոյնը պայմանաւորող այդ ազդակներէն միայն մէկը առանձնապէս չի կրնար սեւ կամ ճերմակ յատկանիշ տալ: Ամբողջ ազդակները միանգամայն ներկայ պէտք է ըլլան, որպէսզի երախային գոյնը կամ սև, կամ ճերմակ ըլլայ:

Արդ, խառնածին ամուսնութիւններու պարագային, գոյն պայմանաւորող այդ բազմազան ազդակները իրարու կը խառնուին: Արդիւնքը կ'ըլլայ ծնունդը խառնածին մորթով զաւակներու, որոնք աւելի կամ պակաս չափով սեւ կամ ճերմակ են, նայած թէ ո՛ր գոյնի ազդակները կը կրեն առանձնապէս:

Այդ խառնածիններու փոխադարձ ամուսնութիւններու ատեն, որպէսզի զուտ սեւ կամ զուտ ճերմակ զաւակներ ալ ծնին, անհրաժեշտ է որ, հազուադիւրս դիպուածով մը, սեւութեան գոյնի ազդակները, կամ ճերմակութեան ազդակները, խառնուրդէն դուրս գան, բաժնուին և անխառն, իրենց սկզբնական մաքրութեամբ կեդրոնանան սաղմի մը մէջ:

Ու ատիկա պատահած է: Չափազանց հազուադէպ կերպով, խառնագոյն ծնողքներէ սերած են զաւակներ, որոնք գրեթէ բոլորովին սեւ կամ բոլորովին ճերմակ եղած են:

Հաւանականութեան ի՞նչ բացառիկ խաղ: